«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 263-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ **ԿՈՄԻՏԵ**

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«____ » _____*2021 թ.* **N**_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 263-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 5.1-րդ կետերը, 16-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 263-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. հրամանիհավելվածի 72-րդկետի «բնակելիևհասարակականշենքերիպատուհաններից» բառերըփոխարինել «բազմաբնակարան բնակելիևհասարակականշենքերիպատուհաններից, իսկանհատականբնակելիտներիդեպքում՝հողամասիսահմանագծից, » բառերով,

2. հրամանի հավելվածի 305-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «305. Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայանները պետք է նախատեսել.

1) քաղաքային և գյուղական բնակավայրերի (բնակելի թաղամասերում) ավտոտեխսպասարկման մեկ «փոքր» կետում՝ մինչև 10 (ներառյալ) մարդատար ավտոմոբիլների,

2) քաղաքային և գյուղական բնակավայրերի ծայրամասերում տեղակայվող ավտոտեխսպասարկման մեկ «միջին» կետում՝ 11-30 մարդատար ավտոմոբիլների,

3) հանրապետական նշանակության ճանապարհների հետ քաղաքային և գյուղական բնակավայրերի սահմանագծերի հատման վայրերում տեղակայվող ավտոտեխսպասարկման մեկ «խոշոր» կետում՝ 30-ից ավելի մարդատար ավտոմոբիլների հաշվարկով:

Ավտոտեխսպասարկման կետերի համար հատկացվող հողամասերի չափերն անհրաժեշտ է ընդունել սույն շինարարական նորմերի 33-րդ աղյուսակում տրված ցուցանիշի համաձայն՝ որը հաշվարկված է ավտոտեխսպասարկման փոքր, միջին և խոշոր կայանների (կետերի) համար:

Աղյուսակ 33

Հ/Հ	Ավտոտեխսպասարկման կետերի քանակը՝ ըստ փոքր, միջին և խոշոր կայանների	Հողամասի առավելագույն մակերես ավտոմոբիլների քանակի
1.	Սպասարկման «փոքր» կետ՝ մինչև 10 ավտոմոբիլների համար	0.015հա (150քմ՝ 10 ավտոմոբիլի հաշվարկով)
2.	Սպասարկման «միջին» կետ՝ 11-30 ավտոմոբիլների համար	0.0165հա (165քմ) - 0.0450հա (450քմ

3.	Սպասարկման «խոշոր» կետ՝ 30-ից ավել ավտոմոբիլների համար	Ըստ 1-ին և 2-րդ կետերում ներկայա հաշվարկի մեթոդաբանության

»:

3. Սույնհրամաննուժիմեջէմտնումպաշտոնականհրապարակմանըհաջորդողօր վանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ